ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«07» 10 2021 թ.
№ 24/1.5/24137Հ

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ (+374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
Ք.Երևան, ԴԱՎԹԱՇԵՆ 7-ՐԴ ՓՈՂ. Հ. 1/14-Տ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.05.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ-21/56» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով՝ ՀՀ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոց հ. 11, հ. 9 և Արցախի փողոց հ. 10, հ. 1 բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 100 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 10.09.2021թ. 24/1-8/8211732ել գրության և 15.09.2021թ. 24/1-8/211114772ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/56/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն <<Ինեկոբանկ>> ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից /որակավորման ապահովում 1.079.820 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 719.880 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ԲԱԼԱՅԱՆ

Կատ.՝ Մ. Մելքոնյան